Ա-12

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԲԴ ԱԼ-ՀԱՄԻԴ ԻՀԱԲ

ԵՄԵՆԻ ՄԻՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
(1967-1990թթ.)

Է.00 .02 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ- 2004

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների թեկնածու՝
Շ.Լ. Կարամանուկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Վ. Ա. Բայբուրդյան

պատմական գիտությունների թեկնածու՝
Ս. Ա. Մանուկյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2004թ. հունիսի 29-ին, ժ. 14-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24գ.):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2004թ. մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ Պ. Ա. Չոբանյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1940-60-ականներին արաբական Արևելքում օրըստօրե նոր թափ ստացող ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական և հակամիապետական շարժումներն դրականորեն ազդեցին Եմենի երկու հատվածներում ընթացող քաղաքական գործընթացների վրա: 1962թ. հռչակվեց Եմենի Արաբական Հանրապետությունը (ԵԱՀ), իսկ 1967-ին՝ Եմենի Ժողովրդական Հանրապետությունը (1972-ից՝ Եմենի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն (ԵԺԴՀ)): Եմենի երկու պետությունների ստեղծման, նրանց քաղաքական ու գաղափարախոսական արժեհամակարգերի, ինչպես նաև միավորման գործընթացի (1960-1990-ականներ) ուսումնասիրությունը արդիական և կարևոր է՝ գիտական, քաղաքական ու գործնական նշանակությամբ:

Եմենի միավորման գործընթացի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ երկու պետությունների ստեղծումից հետո կողմերից ոչ մեկը գործուն կերպով չի նպաստել իրական միավորմանը: Միավորման գաղափարը շատ հաճախ ծառայել է քաղաքական առանձին խմբերի և կուսակցությունների իշխանության գալուն կամ իշխանական համակարգում իրենց դիրքերն ամրապնդելուն: Միասնության գաղափարը, դառնալով եմենական ազգային արժեհամակարգի հիմնական տարրերից մեկը, հնարավորություն էր տալիս ապահովելու առավելագույն ժողովրդական աջակցություն: 1960-ականներից ի վեր եմենական հասարակությունը թե՛ Հյուսիսում և թե՛ Հարավում երկու հանրապետությունների արտաքին և ներքին քաղաքական բազմաթիվ դժվարություններ բացատրում էր միասնության բացակայության հանգամանքով, ինչի հետ հաշվի չէր կարող չնստել որևէ քաղաքական ուժ: Փաստորեն միասնության գաղափարը 1960-ականներից մինչև վերջնական միավորում դարձել էր Եմենի հասարակական գիտակցության լեյտմոտիվը:

Եմենի միավորման գործընթացի մանրակրկիտ ուումնասիրությամբ է՛լ ավելի տեսանելի են դառնում գաղափարական և քաղաքական դաշտում միմյանց հետ մրցակցող Հյուսիսային և Հարավային Եմենների միջև հակասությունների, ինչպես նաև միավորման հարցում դրանց անզիջում գործելակերպի պատճառներն ու մի շարք իրողությունները: «Սառը» պատերազմի տարիներին Եմենի երկու հատվածների հարաբերություններն ընթացան սուր պայքարի պայմաններում՝ հանդես գալով որպես որպես միջազգային զարգացումների անդրադարձ, որն

էապես ազդեց միավորման գործընթացի վրա: Միավորման հարցում թե՛ Հյուսիսը և թե՛ Հարավը գործում էին առանց փոխզիջումների՝ ձգտելով գերակայության հասնել մեկը մյուսի նկատմամբ:

«Սառը» պատերազմի ավարտից հետո ի հայտ եկան միջազգային նախադրյալներ, որոնց օգնությամբ Եմենի միավորմանը միտված գործընթացն ի վերջո հանգուցալուծվեց: Սակայն այսօր էլ միավորման գործընթացը չի կարելի ավարտուն համարել:

Եմենի արդի շրջանի պատմության ուսումնասիրությունը գրեթե անհնար է առանց Եմենի երկու հատվածների հիշյալ ժամանակաշրջանի պատմության մեջ միասնական հայրենիքի գործոնի լուսաբանման: Ընդ որում այդ գործոնի բացահայտումը նպաստում է հասկանալ երկու հանրապետությունների ինչպես ներքաղաքական զարգացման, այնպես էլ արտաքին կողմնորոշման մի շարք հանգուցային խնդիրների ճիշտ ըմբռնմանը: Մեզանում Եմենի երկու հատվածների պատմության և դրանց միավորման գործընթացի նկատմամբ գիտական հետաքրքրությունը պայմանավորված է ներկա ժամանակաշրջանում նորաստեղծ ազգ-պետությունների կայացման և դրանցում ընթացող արդիականացման գործընթացների ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

2.ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեման ընտրվել է՝ Եմենի 1967-1990թթ. միավորման գործընթացի առանձնահատկությունների հետազոտման և դրա ամբողջական բնութագրումը տալու նպատակով: Դրան հասնելու համար հեղինակը իրականացրել է հետևյալ նպատակները.

- Հետազոտել եմենական հասարակությունների սոցիալական և կառուցվածքային առանձնահատկությունները:
- Լուսաբանել Հյուսիսում՝ հակամիապետական հեղափոխության և Հարավում՝ հակագաղութային պայքարի շրջանում ստեղծված քաղաքական իրադրությունը:
- Քննարկել Հյուսիսում 1962-1970թթ. քաղաքացիական պատերազմին առնչվող խնդիրները:
- Լուսաբանել քաղաքական ինստիտուտների զարգացման հնարավորությունները Եմենի երկու հատվածներում:
- Միավորման գործընթացի շրջանակներում քննել երկկողմ հարաբերությունների ընթացքը, ինչպես նաև նշված ժամանակահատվածում Եմենի երկու մասերում միասնության հասնելու նպատակին առնչվող ներքաղաքական զարգացումները:
- Գոյություն ունեցող սկզբնաղբյուրների և այլ նյութերի հիման վրա ուսումնասիրել միավորման գործընթացի բոլոր փուլերը, միավորմանը միտված գագաթնաժողովների ընթացքը, միավորման պայմանագրերը, միավորման հանձնախմբերի և Եմենի Գերագույն Խորհրդի աշխատանքները:
- Բացահայտել միավորման շրջանակներում երկու կողմերի քաղաքական և զինվորական վերանախավերի գործելակերպը, ինչպես նաև ազգային ուժերի վարքագիծը:
- Ուսումնասիրել արտաքին և ներքին այն նախադրյալները, որոնք մեծապես նպաստեցին Եմենի երկու հանրապետությունների միավորմանը:

3.ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման մեզանում դեռևս չի արժանացել հատուկ ուսումնասիրության: Եմենի երկու հատվածների նորագույն պատմությանն առնչվող որոշ հարցեր քննարկել են մի քանի հայ հեղինակներ: Առ այսօր սակայն Եմենի միավորման գործընթացն առանձին ներկայացված չէ: Սույն աշխատությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայկական արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, ուր հանգամանորեն վերլուծված են նշված ժամանակաշրջանում Եմենի երկու հանրապետությունների ստեղծման, քաղաքական ինստիտուտների և պետական համակարգերի ձևավորման, Եմենի երկու հատվածների հասարակությունների կառուցվածքային ու սոցիալական առանձնահատկությունները, դրանց հարաբերությունները, ներքաղաքական զարգացումները, և, վերջապես, Եմենի միավորման գործընթացի փուլերը, դրանց վրա ներքին և արտաքին գործոնների անդրադարձները:

4.ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսությունն ընդգրկում է 1967-1990թթ. ժամանակահատվածը՝ մինչև 1990թ. Եմենի միավորումը: Ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեմայի ժամանակաշրջանը ներառում է Եմենի երկու հատվածների միավորման գործընթացի և դրա հանգուցալուծման հիմնական շրջանը:

5.ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանության հիմքը Եմենի երկու հատվածների հարաբերությունների և նրանց միավորման հետ կապված հարցադրումների և

տեսակետների քննական մեկնությունն է, փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

6.ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն աշխատության մեջ քննարկված դրույթները, նյութերը և տվյալները կարող են օգտագործվել Եմենի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրներում քաղաքական գործընթացների, տվյալ ժամանակաշրջանի քաղաքական պատմության հիմնախնդիրներին նվիրված դասընթացներում և ուսումնասիրություններում: Աշխատության եզրահանգումները օգտակար կարող են լինել պետական մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև Եմենի նկատմամբ արտաքին քաղաքական որոշ հարցեր մշակելու տեսանկյունից:

7.ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ արաբագիտության ամբիոնում: Նրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հոդվածներում, որոնց ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

8.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է արաբերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Հետազոտությանը զգալիորեն նպաստել են արաբ և օտարազգի հեղինակների՝ քննարկվող թեմային նվիրված արժեքավոր աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև պաշտոնական հրատարակությունները, քաղաքական գործիչների հայտարարությունները, պարբերականները, տեղեկատուները:

Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր ծառայել են 1988, 1989 և 1990թթ. Սանայում հրատարկված Եմենի միավորման փաստաթղթերի II, III, IV ժողովածուները, 1934թ. Բրիտանիայի և Եմենի միջև կնքված պայմանագիրը, Տրիպոլիի (1972թ.), Թաիզի (1981թ.), Սանայի (1988 և 1990թթ.), Ադենի (1989թ.) գագաթնաժողովների հռչակագրերը, Արաբական Պետությունների Լիգայի Կահիրեի (1972թ.) և Քուվեյթի (1979թ.) գագաթնաժողովների՝ Եմենի վերաբերյալ բանաձևերն ու որոշումները, Եմենի Գերագույն Խորհրդի (ԵԳԽ), միավորման հանձնախմբերի որոշումներն ու հայտարարությունները, Եմենի Համաժողովրդական կոնգրեսի, ինչպես նաև Եմենի սոցիալիստական կուսակցության ծրագրային փաստաթղթերը: Գիտական շրջանառության մեջ են դրվել նաև Եմենի Մաջլիս աշ-Շուրայի, Սանայում ԱՄՆ-ի դեսպանության, ինչպես

նաև Ադենում սոցիալիստական կուսակցության գրադարաններում գտնվող Եմենի նշված ժամանակաշրջանի պատմությանն առնչվող արխիվային նյութեր:

Մյուս կարևոր աղբյուրը արաբական զանազան պարբերականներն են, հատկապես Եմենի Արաբական Հանրապետության, Եմենի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության, Եգիպտոսի, Արաբական Միացյալ Էմիրությունների, որոնցից հարկ է նշել՝ «աս-Սաուրա», «Արբաթա աշար օքթոբըրը», «Սիթթա ուա իշրին սիբթեմբըրը», «ալ-Ահրամը», «ալ-Խալիջը», ինչպես նաև Լոնդոնում հրատարակվող «աշ-Շարկ ալ-Աուսատը» և «ալ-Հայաթը», որոնցում տեղ են գտել Եմենի բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններ և Եմենի երկու հատվածներների տվյալ ժամանակահատվածի պատմությանը վերաբերող պաշտոնական տեղեկություններ:

Հայցողի առջև ծառացած խնդիրների լուծմանը նպաստել են, մասնավորապես, արաբ հեղինակների արժեքավոր աշխատությունները: Արաբ պատմագրությունը լավագույնս ուսումնասիրել է Հյուսիսային և Հարավային Եմենների պատմությունը թե՛ մինչև դրանց անկախանալը, թե՛ 1960-ականներից մինչև 1990թ. ընկած ժամակահատվածը՝ ներառյալ միավորման գործընթացը: Արաբ պատմագիրները մանրամասն քննել են Եմենի երկու հատվածների ներքին և արտաքին քաղաքական այն իրողությունները, որոնք անդրադարձել Եմենի միավորման գործընթացի վրա: Այս իմաստով ուշագրավ են Հասան Ահմադ Աբու Տալիբի, Խալիդ բին Մուհամմադ ալ-Կասիմիի, Սամիր Մուհամմադ ալ-Աբդալիի, Աբդ առ-Ռահման ալ-Յուսուֆի, Մուհամմադ Ահմադ ալ-Օշմալիի աշխատանքները[1]: Արաբ հեղինակներն անդրադարձել են Եմենի երկու հատվածների քաղաքական և սոցիալական պատմությանը: Այս առումով հիշարժան են Ալի աս-Սարաֆի և Մուհամմադ Ամր ալ-Հաբաշի[2] աշխատությունները: Ուսումնասիրությունների մի խումբ նվիրված են Եմենի երկու հատվածների հասարակությունների կառուցվածքին և ցեղային առանձնահատկություններին, որոնք իրենց հերթին

---

[1] حسن أحمد أبو طالب، الصراع بين شطرى اليمن: جذوره وتطوراته، مطابع الأهرام التجارية، القاهرة، ديسمبر ١٩٧٩م. خالد بن محمد القاسمى، الوحدة اليمنية حاضراً ومستقبلاً، دار مكتبة الهلال، بيروت، ١٩٨٧م. سمير محمد احمد العبدلى، الوحدة اليمنية والنظام الإقليمى العربى، مكتبة مدبولى، القاهرة، ١٩٩٧م، معوقات الوحدة اليمنية، رسالة دبلوم فى العلوم السياسية، معهد الدراسات العربية، القاهرة، ١٩٨٩م. عبد الرحمن يوسف بن حارث، الوحدة اليمنية التاريخ الواقع المستقبل، دار الثقافة العربية للنشر والترجمة، الشارقة، الطبعة الأولى، ١٩٩٠م. محمد أحمد العشملى، التاريخ السياسى للدولة اليمنية الحديثة (من الشتات والانفلاق إلى الوحدة والانفتاح) ١٨٣٨-٢٠٠١، مكتبة مدبولى، القاهرة، ٢٠٠٢م.

լրջորեն ազդել են Եմենի երկու հատվածների քաղաքական իրադրության վրա: Այս առումով ուսանելի են Ֆադլ Ալի Ահմադ Աբու Ղանեմի և Մուհամմադ Մուհսին ազ-Զահիրիի աշխատանքները[3]: Արաբ պատմաբաններ Ռադիյա Իհսանալլահը և Մուհամմադ Ալի աշ-Շիհարին[4] խիստ յուրովի են մեկնաբանել խնդրո առարկա մի շարք հարցեր:

Ատենախոսությանը մեծ նպաստ են բերել նաև Եմենի հասարակական և քաղաքական գործիչների հուշերն ու ինքնակենսագրությունները, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում հիշյալ շրջանի պատմության մասին: Կարելի է առանձնացնել Սինան Աբու Լահումի, Աբդ առ-Ռահման ալ-Մուրադի ալ-Բեյդանիի և Մուհսին ալ-Այնիի աշխատանքները[5]:

Խորհրդային արևելագիտությունը նույնպես լավագույնս ուսումնասիրել է Եմենի նորագույն շրջանի պատմությունը, ներառյալ երկկողմ հարաբերությունները: Այս առումով ուշագրավ է Ե. Գոլուբովսկայայի «Եմենի Արաբական Հանրապետության քաղաքական զարգացումը 1962-1985թթ.»[6] մենագրությունը, որտեղ մանրազնին վերլուծության են ենթարկվել ԵԱՀ-ի սոցիալ-քաղաքական զարգացումները սկսած 1962-ի հակամիապետական հեղափոխությունից ընդհուպ մինչև 1980-ականների կեսերը: Փորձ է արվել հետևել սոցիալական ուժերի սահմանազատմանը 1962-1970թթ. քաղաքացիական պատերազմի ընթացքում, 1980-ականներին ղեկավարող խմբավորումների և քաղաքական կուսակցությունների զարգացմանը, ԵԱՀ-ում պետական-քաղաքական համակարգի ձևավորմանը:

Օ. Գերասիմովի «Եմենական հեղափոխությունը 1962-1975թթ.»[7] մենագրության մեջ քննարկվում է հեղափոխական և ազգային-ազատագրական

---

[2] على الصراف، اليمن الجنوبى – الحياة السياسية من الاستعمار إلى الوحدة، رياض الريس للكتب والنشر، لندن-قبرص، الطبعة الأولى، ١٩٩٢م. محمد عمر الحبشي، اليمن الجنوبي سياسياً واقتصادياً واجتماعياً، دار الطليعة للطباعة والنشر، بيروت، ١٩٧٨م.

[3] فضل على احمد أبو غانم، البنية القبلية فى اليمن بين الاستمرار والتغيير، مطبعة الكاتب العربى، دمشق، ١٩٨٥م. فضل على احمد أبو غانم، القبيلة والدولة فى اليمن، دار المنار، القاهرة، الطبعة الأولى، ١٩٩٠م. محمد محسن الظاهرى، الدور السياسى للقبيلة فى اليمن ١٩٦٢-١٩٩٠، مكتبة مدبولى، القاهرة، الطبعة الأولى، ١٩٩٦م.

[4] رضية إحسان الله، وثائق حرب اليمن – عدن ٩٤/٥/٥ إلى ١٩٩٤/٧/٧ لماذا سكت العالم بعد احتلال عدن؟، بدون دار نشر، عدن، ١٩٩٦م. محمد علي الشهاري، جدل حول الثورة والوحدة اليمنية، مكتبة مدبولي، القاهرة، الطبعة الأولى، ١٩٩٠م، نظرة فى بعض قضايا الثورة اليمنية، مكتبة مدبولى، القاهرة، الطبعة الأولى، ١٩٩٠م.

[5] سنان أبو لحوم، اليمن حقائق ووثائق عشتها (١٩٤٣-١٩٦٢م)، مؤسسة العفيف الثقافية، صنعاء، الطبعة الثانية، ٢٠٠٠م. عبد الرحمن المرادى البيضانى، مصر وثورة اليمن، دار المعارف، القاهرة، الطبعة السادسة، ١٩٩٤م. محسن العينى، خمسون عاماً فى الرمال المتحركة – قصتى مع بناء الدولة الحديثة فى اليمن، دار النهار للنشر، بيروت، الطبعة الأولى، ١٩٩٩م.

6.Голубовская Е., Политическое развитие Йеменской Арабской Республики 1962-1985гг., М., 1989.

7.Герасимов О., Йеменская Революция, 1962-1975гг., М., 1979.

պայքարի ընթացքը Եմենի հյուսիսային և հարավային շրջաններում: Ցույց է տրվում եմենական ռեգիոնի վրա արաբական աշխարհում ընթացող քաղաքական գործընթացների ազդեցությունը:

Ատենախոսությունը գրելիս հեղինակին մեծապես օգնել է Վ. Նաումկինի կողմից Հարավային Եմենի 1917-1985թթ. պատմության հանգամանալից վերլուծությունը, որը զետեղվել է «Ասիայի արաբական երկրների նոր շրջանի պատմությունը» ժողովածուում[8]:

Ատենախոսը ծանոթացել է նաև Եմենի վերաբերյալ հայ հեղինակների, մասնավորապես Վ. Ավագյանի աշխատանքներին[9], նվիրված նախագահ Ալի Աբդալլա Սալիհի շրջանում Հյուսիսային Եմենի ներքաղաքական խնդիրների ուսումնասիրությանը: Ատենախոսությունը գրելիս հեղինակին մեծապես օգնել են նաև 1995-1998թթ. Եմենում որպես Եգիպտոսի դիվանագետ պաշտոնավարած տարիներին ձեռք բերած տեղեկությունները, անձնական դիտարկումներն ու շփումները: Հեղինակն օգտվել է Կահիրեի համալսարանի, Կահիրեի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի, Եգիպտոսի արտաքին գործերի նախարարության Դիվանագիտության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարաններից:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթագլուխներից), եզրափակումից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը:

Առաջին գլուխը՝ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՄԵՆՈՒՄ ՆԱԽԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ», անդրադառնում է Եմենի հասարակության սոցիալական իրավիճակին, ինչպես նաև 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի առաջին կեսին Եմենում ընթացող քաղաքական գործընթացներին:

---

8. Наумкин В., Народная Демократическая Республика Йемен, В кн.: Новейшая история арабских стран Азии, М., 1988.

[9] Авакян В., Создание правящей политической организации в развивающейся стране (Йеменская Арабская Республика), Автореферат, Ер., 1989. Նույնի՝ "Внешнеполитический курс северойеменского руководства в первой половине 80-х гг. "Вестник общественных наук АН АрмССР", No. 12, Ер., 1988.

Գլխի առաջին ենթաբաժնում քննարկվում են Եմենի հասարկության սոցիալական առանձնահատկությունները: Ժամանակակից Եմենի ճնշող մեծամասնությունը արաբներ են, որ խոսում են արաբերեն և դավանում են իսլամ: Իսլամի սուննի ուղղության հետևորդները բնակվում են կենտրոնական և առափնյա հարավային շրջաններում: Բնակչության շուրջ 43%-ը շիական աղանդի՝ զեյդիականության հետևորդներ են, որ բնակվում են Սանայի շրջակայքում և երկրի հյուսիսում: Եմենի բնակչության մոտ 1,5%-ը շիական ուղղություններից մեկի՝ իսմաիլականության հետևորդներ են և բնակվում են Սանայի մոտ գտնվող Հարազի շրջանում: Ցեղային գործոնը եմենական հասարակության մեջ հատուկ և մեծ դերակատարություն ունի: Եմենում ցեղերի թիվն այսօր հասնում է ավելի քան 160-ի: Որոշ տվյալների համաձայն՝ Եմենում ցեղերը կազմում են բնակչության 80-85%-ը: Առավել ազդեցիկ և մեծ ցեղերից են Հիմյարը, Մազհաջը և Համադանը: Համեմատաբար լեռնային և անապատային հատվածներում ցեղային հարաբերություններն ավելի կենսունակ են: Ցեղերից յուրաքանչյուրն ունի իր կառուցվածքը, սեփական կանոնները (կանուն) և սովորույթային նորմերը (ուրֆ): Յուրաքանչյուր ցեղ ունի սեփական զինված ջոկատներ: Պետության կանոնավոր բանակը զիջել և զիջում է ցեղերին զինվածության առումով թե՛ Եմենի միավորումից առաջ, թե՝ հետո՝ բացառությամբ ռազմաօդային ուժերի և ծանր զինատեսակների:

Երկրորդ ենթաբաժնում քննարկվում է Եմենի քաղաքական իրադրությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին կեսին: Օսմանյան կայսրության և Մեծ Բրիտանիայի նվաճումների արդյունքում պատմական Եմենը մասնատվեց: 1839թ. Մեծ Բրիտանիան երկրի հարավից դուրս մղեց Օսմանյան կայսրությանը: Հարավի տարածքների հիմնական մասը ներառում էին Անգլիայի կողմից տարբեր ժամանակներում սուլթանություններից, շեյխություններից և էմիրություններից ստեղծված պրոտեկտորատները, որոնց հետ տարաբնույթ դաշնագրեր ու պայմանագրեր ստորագրելու գործընթացը շարունակվեց ընդհուպ մինչև 1950-ականների վերջը: Երկրի գլխավոր քաղաքը՝ Ադենը, անգլիական գաղութ էր: Հյուսիսում թուրքերի դեմ մղված երկարատև մարտերը ղեկավարեց զեյդի իմամ Յահյա Համիդ ադ-Դինը: Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո Եմենը դարձավ անկախ պետություն (իմամություն)՝ իմամ Յահյայի գլխավորությամբ, որը պահանջեց վերադարձնել եմենական բոլոր գրավյալ

տարածքները: Բրիտանիան արեց ամեն ինչ՝ Հարավում իր գերակայությունը պահպանելու համար: Եմենի և անգլիացիների միջև սկսված հակամարտությունն ավարտվեց 1934թ. կողմերի միջև կնքված պայմանագրով համաձայն որի՝ Մեծ Բրիտանիան ճանաչեց Եմենի անկախությունը, իսկ իմամ Յահյան Հարավային Եմենում ստատուս-քվոն: Հարավում քաղաքական տարանջատվածությունը նպաստում էր երկրի տնտեսական և սոցիալական հետամնացությանը, կասեցնում բնակչության էթնիկ համախմբման գործընթացն ու ազգային ինքնագիտակցության զարգացումը: Երկրորդ աշխարհամարտից հետո Եմենի հարավում աստիճանաբար սկսեց վերելք ապրել ազգային ինքնագիտակցությունը: 1940-ականների երկրորդ կեսից ընդհուպ մինչև 1950-ականների վերջերը Ադենում, որը քաղաքական կյանքի ոչ պակաս կարևոր կենտրոն էր նաև հյուսիսցիների համար, ստեղծվեցին հասարակական քաղաքական և արհմիութենական մի շարք կազմակերպություններ, որոնք ընդհանուր առմամբ առաջ էին քաշում Հարավում գաղութատիրության, Հյուսիսում՝ միապետության լուծարման, իսկ հետագայում՝ Եմենի երկու հատվածների միավորման գաղափարներ: 1959թ. փետրվարին Անգլիան ստեղծեց Հարավի էմիրությունների Ֆեդերացիա (1962-ից՝ Հարավային Արաբիայի Ֆեդերացիա): Հարավում սկիզբ առած ազգային-ազատագրական պայքարին աջակցելու հարցում կարևոր նշանակություն ունեցավ 1965թ. նոյեմբերին ՄԱԿ-ի ԳԽ թիվ 2023 բանաձևը, որը Մեծ Բրիտանիային կոչ էր անում դուրս բերել զորքերը Ադենից և Հարավային Եմենից: 1940-ականների երկրորդ կեսին քաղաքական կարևոր զարգացումներ տեղի ունեցան Հյուսիսում: Ձևավորվեցին իմամությանն ընդդիմադիր ուժեր, որոնք հանդես էին գալիս կառավարող դինաստիայի բռնակալական քաղաքականության և երկրի մեկուսացման դեմ: 1948թ., ապա 1955թ. Հյուսիսում հեղաշրջման երկու անհաջող փորձեր տեղի ունեցան:

Երկրորդ գլուխը՝ «ԵՄԵՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ», անդրադառնում է Հյուսիսում միապետության լուծարմանը, Հարավում հակագաղութային ազգային-ազատագրական շարժումներին, երկրում երկու հանրապետությունների ստեղծմանը, դրանց հարաբերություններին. 1972 և 1979թթ. պատերազմներին, ինչպես նաև միավորման գործընթացի սկզբնավորմանը:

Առաջին ենթաբաժնում քննարկվում է եմենական երկու պետությունների ստեղծումն ու նրանց հարաբերությունները 1960-ականներին: 1962թ. սեպտեմբերի 26-ին Հյուսիսում տեղի ունեցավ հակամիապետական հեղափոխություն, հռչակվեց

Եմենի Արաբական Հանրապետությունը: Հեղափոխության առաջին իսկ օրերին ձևավորվեցին իշխանության բարձրագույն մարմիններ՝ Հեղափոխական Հրամանատարության Խորհուրդը, Նախարարների Խորհուրդը՝ Աբդալլա աս-Սալալի գլխավորությամբ և Նախագահական Խորհուրդը: Սակայն ԵԱՀ առաջին ժամանակավոր սահմանադրության մեջ որևէ կերպ չէր ակնարկվում Եմենի գրավյալ Հարավի մասին: Եմենների միավորման մասին գրեթե չխոսելը պետք է բացատրել այն հանգամանքով, որ Հյուսիսը խուսափում էր Հարավում բրիտանական քաղաքականության հետ նոր ճակատ բացել: 1963-ին Հարավում անգլիական գաղութատիրության դեմ պայքարում հրատապ դարձավ հայրենասիրական ուժերի միավորման հարցը: Նույն թվականին Սանայում ստեղծվեց «Գրավյալ Հարավի ազատագրման ճակատը» (կամ «Ազգային ճակատը»), որ գտնվում էր «Արաբ ազգայնականների շարժման» (ԱԱՇ) ազդեցության տակ: Ճակատը կարողացավ օգտագործել 1963թ. հոկտեմբերի 14-ին գաղութատիրության դեմ Ռադֆանի ցեղերի խռովությունը պայքարի նոր՝ զանգվածային փուլ սկսելով: 1963-1965թթ. ճակատը ռազմական և քաղաքական բացառիկ հաջողություններ ունեցավ: Նրան ի վերջո հաջողվեց գաղութատիրության դեմ պայքարող ազգային մյուս ուժերից առաջ անցնել և իր ձեռքը վերցնել իշխանությունը: 1967թ. նոյեմբերի 29-ին հռչակվեց Հարավային Եմենի անկախությունը: Եմենի Ժողովրդական Հանրապետության ստեղծումը նշանավորեց Եմեն անունով երկու պետությունների գոյությունը: Չնայած նորաստեղծ պետության առաջին սահմանադրության մեջ արտահայտված էր միացյալ Եմենի ստեղծման ձգտումը, այնուամենայնիվ, Հարավային Եմենի առաջին նախագահ «Ազգային ճակատի» ղեկավար Կահտան աշ-Շաաբին գործուն կերպով չէր նպաստում միավորմանը: Երբ Հարավային Եմենը հռչակվեց անկախ պետություն, Հյուսիսում շարունակվում էր 1962-ի հեղափոխությունից հետո սկսված քաղաքացիական պատերազմը իշխանության գլխին գտնվող հանրապետական վարչակարգի և միապետության կողմնակիցների միջև: Խնդրի կարգավորումը ավելի էր բարդացնում երկրի ներքին գործերին արտաքին միջամտության փաստը: Եգիպտոսը ռազմական և քաղաքական օգնություն էր ցույց տալիս հանրապետականներին, իսկ Սաուդյան Արաբիան՝ միապետականներին: Ներքաղաքական ճգնաժամին նպաստում էր նաև հանրապետականների երկփեղկվածությունը, որոնց շրջանում տարանջատվեցին ճախերն ու աջերը: 1967թ. հունիսի արաբ-իսրայելական պատերազմից հետո Եգիպտոսը վերանայեց ԵԱՀ-ում իր ռազմական ներկայության հարցը և 1967թ.

աշնանը, համաձայն 1967թ. օգոստոսի Խարթումի պայմանագրի, դուրս բերեց 1962-ից ԵԱՀ-ում գտնվող իր զորքերն այդտեղից: Այս հանգամանքը թուլացրեց նախագահ աս-Սալալի դիրքերը, որը 1967թ. նոյեմբերի 5-ին հեռացվեց իշխանությունից: Ձևավորվեց կոալիցիոն կառավարություն՝ Աբդ առ-Ռահման ալ-Արիանիի գլխավորությամբ: 1967թ. նոյեմբերին միապետության կողմնակիցները, ձգտելով վերականգնել միապետությունը, շրջափակեցին Սանան, որ տևեց 70 օր: Երկրում սկիզբ առավ ժողովրդական դիմադրության շարժում, որն առաջնորդելու հարցում մեծ նպաստ բերեցին հանրապետական ճախերը (հիմնականում՝ ԱԱՇ-ը, Բաասը և մարքսիստները): Սանայի ազատագրումից հետո հանրապետականների մեջ տեղի ունեցավ սոցիալ-քաղաքական ուժերի բևեռացում: Ճախերը բռնությունների ենթարկվեցին: Ժողովրդական դիմադրության շարժման շատ մասնակիցներ փախան Հարավ: Հարավի կառավարությունը և իշխանության մեջ գտնվող «Ազգային ճակատն» աջակցում էին Հյուսիսում հանրապետական ճախերին, որի պատճառով Սանան Ադենին մեղադրեց անջատողականության մեջ: Եմենի երկու հատվածների միջև սկիզբ առած հակասությունը դարձավ հրապարակային և ավելի խորացավ, երբ 1969թ. հունիսի 22-ին «Ազգային ճակատի» ճախ ուժերը, որ որդեգրել էին գիտական մարքսիզմի գաղափարախոսությունը, իշխանությունն իրենց ձեռքը վերցրին: Արդեն 1970թ. քաղաքացիական պատերազմը Հյուսիսում հաղթահարված էր, իսկ 1970թ. մարտին հանրապետականների և միապետականների միջև ստորագրվեց հաշտության պայմանագիր, որից հետո Սանան Ադենին իրազեկ դարձրեց Եմենի միավորումն իրականացնելու իր ցանկության մասին: Երկու հատվածների հարաբերությունները սկսեցին դրականորեն վերելք ապրել, որին հաջորդեց կողմերի պայմանավորվածությունը 1970թ. նոյեմբերին Թաիզում երկու պետությունների դաշնային միություն ստեղծելու միջոցառումների շուրջ: Սակայն հետագայում այս միտումը դանդաղեց, ապա ընդհատվեց՝ երկու վարչակարգերի միջև հակասությունների և դրանց ներքին ու արտաքին քաղաքական կուրսերի հակոտնյա լինելու պատճառով: Վերականգնվեցին լարվածության երևույթները: Երկրներից յուրաքանչյուրում ընթացող զարգացման գործընթացներն ունեին տարբեր բովանդակություններ, որ արտահայտվում էր ներքաղաքական գործընթացների բյուրեղացմամբ:

Սույն գլխի <u>երկրորդ ենթաբաժինն</u> անդրադառնում է Եմենի երկու հատվածների առճակատմանը, ինչպես նաև միավորմանն ուղղված նրանց քայլերին 1970-ականներին: 1972թ. փետրվարի 20-ին տեղի ունեցավ Եմենի

հյուսիսային և արևելյան շրջանների մեծ թվով շեյխերի սպանությունը ճաշկերույթի ժամանակ, վրանի պայթեցման հետևանքով: Հյուսիսում այս դեպքի կազմակերպումը վերագրվեց Ադենին, որը սկիզբ դարձավ հետագա լարվածության և 1972թ. սեպտեմբերի սահմանային բախումների: Երկու պետությունների միջև վիճելի հարցերը կարգավորելու միջնորդական առաքելությամբ հանդես եկավ Արաբական Պետությունների Լիգան (ԱՊԼ), որի արդյունքում կողմները համաձայնության եկան կրակի դադարեցման մասին: 1972թ. հոկտեմբերի 28-ին Կահիրեում ԱՊԼ շրջանակներում սկսվեցին բանակցությունները ԵԱՀ-ի և ԵԺԴՀ-ի վարչապետների միջև, որն ավարտվեց մեկ միասնական պետության մեջ երկու Եմենների միավորման մասին Կահիրեի պայմանագրի ստորագրմամբ: Այն դարձավ ապագա միավորված կառույցի հիմնաքարը: Եմենի ապագա կառավարման համակարգը պետք է լիներ հանրապետական, ազգային-ժողովրդավարական: Միավորման գործընթացի շրջանակներում ստեղծվեցին մասնագիտական համատեղ հանձնախմբեր, որոնք զբաղվելու էին միասնական սահմանադրության, համակարգերի միավորման, օրենսդրության, արտաքին քաղաքականության, տնտեսականան, ռազմական, կրթական, առողջապահական, իրավական և մշակութային խնդիրների համակարգմամբ: Հանձնախմբերն իրենց մշակած նախագծերը պետք է ներկայացնեին Եմենի երկու հատվածների խորհրդարանների քննարկմանը, որից հետո միայն դրանք կդրվեին հանրաքվեի: Եմենի երկու հատվածների նախագահները 1972թ. նոյեմբերի 28-ին Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիում ստորագրեցին Տրիպոլիի միավորման հռչակագիրը, որն ուրվագծեց միացյալ պետության ստեղծումը՝ առանց ստույգ մեխանիզմներ առաջադրելու: Եմենի երկու հատվածներում տիրող իրավիճակը դեռևս հասունացած չէր վերջնական միավորման համար: Կողմերից յուրաքանչյուրը հավակնում էր ապագա միացյալ պետության մեջ առաջնության: Բացի այդ միասնության, ինչպես նաև քաղաքական ու տնտեսական զարգացման ուղիների վերաբերյալ երկու իրարամերժ դիրքորոշումները միասնության հռչակագրերը դարձնում էին անկենսունակ: Կողմերից յուրաքանչյուրը փորձում էր մյուսին պարտադրել իր պայմանները, որն ի վերջո հանգեցնում էր լարվածության, տարանջատման և տեղեկատվական պատերազմի: Բացի այդ յուրաքանչյուր վարչակարգ հովանավորում էր մյուս վարչակարգին ընդդիմադիր քաղաքական ուժերին, որը չէր նպաստում միավորմանը: Դրական կարելի է համարել այն փաստը, որ սկսեցին հանդիպել Եմենի երկու հատվածների ղեկավարները, նրանց անձնական

ներկայացուցիչները, համատեղ հանձնախմբերը: Միասնությանն ուղղված ջանքերի վրա ծանր հետևանքներ ունեցավ Հյուսիսային Եմենի Հանրապետական Խորհրդի անդամ և հայտնի ցեղապետ շեյխ Ալի Օսմանի սպանությունը Թաիզում 1974թ. մայիսի 3-ին, որը բավարար հիմք դարձավ Սանայի համար Ադենին մեղադրել քաղաքական սպանությունների մեջ և կասեցնել աշխատանքը համատեղ հանձնախմբերի հետ: Ընդհատվեցին հանձնախմբերի աշխատանքները, Կահիրեի պայմանագրի և Տրիպոլիի հռչակագրի սկզբունքները չեղյալ հայտարարվեցին, դադարեցվեց ԱՊԼ առաքելությունը, որ լիազորված էր վերահսկելու համատեղ հանձնախմբերի աշխատանքները: Եմենի միավորումը զինված ճանապարհով իրականացնելու Սանայի կոչերը նոր թափ ստացան, երկու հատվածներում վերստին հնչեցին տեղեկատվական պատերազմի կոչեր: Սակայն 1974թ. Հյուսիսում փոխգնդապետ ալ-Համդիի իշխանության գալուց հետո երկկողմ հարաբերություններում դրական տեղաշարժեր նկատվեցին: Վերսկսվեցին միասնության շուրջ բանակցությունների և համատեղ հանձնախմբերի աշխատանքները: 1977թ. հոկտեմբերի 11-ին Ադեն մեկնելուց մեկ օր առաջ սպանվեց ալ-Համդին, որը Ադենում պետք է ավարտին հասցներ Եմենի միավորման նախագծի մշակումը: Ալ-Համդիի սպանության նույն օրը հրապարակվեց Հրամանատարության Խորհրդի նոր կազմը, որի նախագահ դարձավ ալ-Ղաշիմին, իսկ Աբդ ալ-Ղանիի կառավարությունը հայտարարեց, որ միավորման շուրջ պատրաստ է բանակցել Հարավի հետ: Սակայն երկու պետությունների միջև աստիճանաբար բարելավվող հարաբերությունները նորից խաթարվեցին այս անգամ ալ-Ղաշիմիի սպանության հետևանքով, որ տեղի ունեցավ նրա իշխանության գալուց ինը ամիս անց: Ալ-Ղաշիմին մահացավ հարավեմենցի պատվիրակի պայուսակում տեղադրված ռումբի պայթյունից: ԵԱՀ ղեկավարությունը ալ-Ղաշիմիի սպանության համար մեղադրեց Ադենին, անձամբ նախագահ Սալիմ Ռուբեյա Ալիին: Սանան խզեց հարաբերությունները Ադենի հետ և մարտական պատրաստվածության բերեց իր ռազմական ուժերը: Պատերազմական գործողությունների ընթացքում Ադենը վերահաստատեց կապերը Սանային, իսկ Սանան՝ Ադենին ընդդիմադիր քաղաքական կազմակերպությունների հետ: Ալ-Ղաշիմիի սպանությունը հանգեցրեց Ադենի վարչակարգի նկատմամբ արաբական բոյկոտին և պատժամիջոցներին: ԱՊԼ արտահերթ հանդիպման ժամանակ որոշվեց սառեցնել քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և մշակութային հարաբերությունները ԵԺԴՀ-ի հետ, ինչպես նաև դադարեցնել այս երկրին արաբական երկրների ցույց տրվող

տեխնիկական օգնությունը: 1978թ. Հյուսիսում իշխանության եկած Ալի Աբդալլա Սալիհը հայտարարեց, որ Ադենի հետ հարաբերությունները թեակոխում են ռազմական նոր փուլ: Եմենի երկու հատվածների սահմանային շրջաններում սկիզբ առած զինված ընդհարումը կանխելու և ճգնաժամը հաղթահարելու նախաձեռնությամբ հանդես եկան արաբական շրջանակները: ԱՊԼ ջանքերով 1979թ. մարտի 4-6-ը Քուվեյթում տեղի ունեցած արաբական երկրների արտգործնախարարների արտահերթ հանդիպման ընթացքում ստորագրվեց կրակի դադարեցման մասին պայմանագիր: Կողմերը պայմանավորվեցին չմիջամտել միմյանց ներքին գործերին երրորդ կողմի միջոցով, դադարեցնել տեղեկատվական պատերազմները, բացել սահմանները և կողմերի միջև վերականգնել բնականոն, ներառյալ առևտրական հարաբերություններն ու ազատ տեղաշարժը: ԵԺԴՀ-ն, որը պատերազմում հաղթող կողմ էր, կարողացավ այս հանդիպումը վերածել Եմենի միասնությունն իրականացնելու փորձի: Քուվեյթի ջանքերով 1979թ. մարտի 28-30-ը տեղի ունեցավ երկու երկրների ղեկավարների գագաթնաժողովը, որտեղ վերահաստատեց Եմենի երկու մասերի միջև միավորման անհրաժեշտությունը, իսկ կնքված պայմանագրի կետերը սահմանեցին միացյալ աշխատանքային ծրագիրը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «ԵՄԵՆԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՄԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ», քննարկում է 1980-1990թթ. Եմենի միավորմանը միտված գագաթնաժողովների, երկու կողմերի Նախարարների Խորհուրդների, Եմենի Գերագույն Խորհրդի և նրա քարտուղարության շրջանակներում տեղի ունեցած աշխատանքները, Հյուսիսում ներքաղաքական առանձին խնդիրներ, ինչպես նաև 1990թ. ապրիլին Սանայի պայմանագիրն ու 1990թ. մայիսի 22-ին Եմենի Հանրապետության հռչակումը:

<u>Առաջին ենթաբաժնում</u> լուսաբանվում է Եմենի միավորման գործընթացը 1980-1982թթ.: Երկու Եմենների հարաբերություններն աստիճանաբար կայունացան 1978թ. հուլիսի 17-ին Հյուսիսային Եմենում Ալի Աբդալլա Սալիհի և 1980թ. Հարավային Եմենում Ալի Նասեր Մուհամմադի իշխանության գալուց հետո: Քաղաքական և սոցիալական կայունության արդյունքում երկկողմ հարաբերություններն ընթացան գագաթնաժողովների, համատեղ նախարարական հանձնախմբերի և Եմենի Գերագույն Խորհրդի և նրա քարտուղարության շրջանակներում տեղի ունեցող կանոնավոր հանդիպումներով: Ադենի (1980թ. մայիսի և 1981թ. սեպտեմբերի), Սանայի (1980թ. հունվարի), Թաիզի (1981թ. սեպտեմբերի և 1982թ. մայիսի) պայմանագրերով ամրագրված առանձին

դրույթներ կարևոր նշանակություն ունեին և հնարավորություն ընձեռեցին հաղթահարել միասնությունը պատնեշող շատ իրողություններ և միավորման ուղղությամբ գործնական քայլեր անել (ներառյալ սահմանադրության մշակումը): Երկկողմ հարաբերությունների վրա զգալի ներգործություն էին ունենում երկու երկրների ներքաղաքական զարգացումները: 1974թ. Հյուսիսային Եմենում զինվորականների իշխանության գալուց հետո ակտիվացան ընդդիմադիր ուժերը: Իշխանությունների գործողությունները միտված էին թուլացնել ավատատիրական-ցեղային վերնախավի դիրքերը և սահմանափակել նրանց մասնակցությունը իշխանության բարձրագույն մարմիններում, որն առաջ բերեց ցեղային ազդեցիկ գործիչների դժգոհությունը: Իշխող վարչակարգին չէր հաջողվում կարգավորել հարաբերությունները նաև հեղափոխական դեմոկրատական ուժերի հետ, որոնց ազդեցությունը զգալիորեն աճեց 1970-ականների երկրորդ կեսին: 1976թ. փետրվարի 11-ին նրանք ստեղծեցին նոր դաշինք՝ «Հայրենասիրական դեմոկրատական ճակատը» (ՀԴՃ), որն առաջ էր քաշում պետության վերակառուցման միջոցով դեմոկրատական ազգային վարչակարգի ձևավորման, ինչպես նաև՝ եմենական հայրենիքի միավորման գաղափարը: 1980-ականների սկզբներին ՀԴՃ-ը, որն ուներ իր զինված ջոկատները, Հյուսիսային Եմենում վերահսկում էր հարավային և կենտրոնական շրջանները, ինչպես նաև երկրի երկրորդ մայրաքաղաք համարվող Թաիզը: ՀԴՃ-ի մարքսիստական ուղղվածությունը մեծապես պայմանավորում էր ճակատին ԵԺԴՀ-ի աջակցությունը: Այս հանգամանքները սպառնալիք էին Սանայի արչակարգի համար:

<u>Երկրորդ ենթաբաժնում</u> լուսաբանվում է Եմենի Գերագույն Խորհրդի գործունեությունը 1982-1984թթ.: ԵԳԽ-ն, որ ղեկավարում էին երկու երկրների նախագահները, կոչված էր վերահսկելու միասնության պայմանագրերի իրականացումը, մասնագիտական հանձնախմբերի աշխատանքներն ու այն միջոցառումները, որոնց վերաբերյալ երկուստեք համաձայնություն կար: Թե՛ Ադենում, թե՛ Սանայում գործող ԵԳԽ քարտուղարության ջանքերով ստեղծվեց համատեղ նախարարական հանձնախումբ՝ զբաղվելու վարչակարգերի միավորման և երկու մասերում հավասարության արժանացած մեթոդներին հետևելու խնդիրներով: 1983թ. օգոստոսի 15-20-ը Սանայում գումարվեց ԵԳԽ առաջին նստաշրջանը, որտեղ քննարկվեցին ԵԳԽ քարտուղարության բարձրացրած հարցերն ու համատեղ հանձնախմբերի, այդ թվում՝ սահմանադրության հանձնախմբի աշխատանքների արդյունքները: ԵԳԽ-ն իր երկրորդ նստաշրջանը

գումարեց Ադենում 1984թ. փետրվարի 15-17-ը, որի ժամանակ նախագահները գոհունակություն հայտնեցին միավորման զարգացումների կապակցությամբ:

1985-1990թթ. Եմենի միավորման գործընթացն ուսումնասիրվում է երրորդ ենթաբաժնում: 1980-1985թթ. տեղի ունեցան ավելի քան տաս գագաթնաժողովներ Սանայում, Թաիզում և Ադենում, կողմերի միջև կնքվեցին շուրջ չորս տասնյակի հասնող պայմանագրեր և հռչակագրեր: 1987թ. թե՛ Սանան և թե՛ Ադենը ներկայացրին միացյալ պետության սեփական նախագծերը: Ուսումնասիրողների կարծիքով՝ Հարավի ներկայացրած նախագիծն ըստ էության ի չիք էր դարձնում այն ջանքերը, որ գործադրվել էին 1972-1986թթ. ընկած ժամանակահատվածում: Ադենը փորձում էր ժամանակը ձգձգել: 1988թ. ապրիլից մինչև 1990թ. մայիսը տեղի ունեցան Եմենի միավորմանը միտված վեց գագաթնաժողովներ: Կարևոր է 1988թ. մայիսի Սանայի գագաթնաժողովը, որի ընթացքում ստորագրվեց պայմանագիր երկու երկրների քաղաքացիների տեղաշարժը միասնական սահմանակետերով իրականացնելու մասին: Եթե հիշյալ խնդրին վերաբերող նախորդ որոշումները սկսած 1972-ից թղթի վրա էին մնում, առաջին անգամ Սանայի պայմանագրի ստորագրումից հետո է, որ երկու հատվածների քաղաքացիներին իսկապես իրական հնարավորություն տրվեց ազատ տեղաշարժվել առանց սահմանափակման կամ նախապայմանների: 1962-ից եմենցիները, որ զրկված էին իրենց ազգականներին տեսնելու հնարավորությունից, վերստին ունեցան դրա առիթը: Այս հանգամանքը մեկ անգամ ևս ապացուցեց միավորման խիստ հրատապությունը: Երկու կողմերում քաղաքական իշխանությունները, հասարակական ճնշման ներքո, աստիճանաբար սկսեցին ավելի գործնականորեն զբաղվել միավորման խնդիրներով: Միավորման նախաձեռնությունը Հյուսիսային Եմենի նախագահ Ալի Աբդալլա Սալիհինն էր, որ փորձում էր խթանել միավորման գործընթացը: Մինչդեռ Հարավը Խորհրդային Միության ազդեցությամբ ձգտում էր սահմանափակել Սանայի հետ մերձեցումը: Ամեն անգամ, երբ Հարավում իշխող սոցիալիստական կուսակցության երկու թևերի միջև աճում էր հակասությունը, միավորման գործընթացի շրջանակներում Հարավում տվյալ պահին իշխանության մեջ եղող ուժը դարձյալ սկսում էր հետամուտ լինել Եմենի միավորմանը՝ նաև իր դիրքերը ներքաղաքական կյանքում ամրապնդելու համար: 1989թ. նոյեմբերի 30-ին Ադենում դռնփակ նիստում երկու նախագահները՝ Սալիհը և Ալբիդը, ստորագրեցին միասնական պետության սահմանադրության մասին պայմանագիրը: Սահմանադրության նախագիծը պետք է քննարկվեր Եմենի երկու մասերի խորհրդարաններում, ապա ներակայացվեր հանրաքվեի: Եմենի

վերամիավորումն իրականացնելու գործադիր աշխատանքների շրջանակներում 1990թ. հունվարի 20-ից մինչև մայիսի 22-ն ընկած ժամանակահատվածում Սանայում և Ադենում տեղի ունեցան երկու կողմերի Նախարարների Խորհուրդների համատեղ ընդլայնված հանդիպումներ, իսկ 1990թ. մարտի սկզբներին Թաիզում հանդիպեցին երկու երկրների վարչապետները: Այս հանդիպումների ընթացքում քննարկվեցին և մշակվեցին Եմենի հասարակական քաղաքական կյանքի տարբեր կողմերը կանոնակարգող օրենքներ և ծրագրեր:

Այնուհետև չորրորդ ենթաբաժնում լուսաբանվում է 1990թ. Սանայի պայմանագիրը և միավորման գործընթացի ավարտը: 1990թ. ապրիլին Սանայում կողմերի ավելի քան յոթանասուն պաշտոնատարների մասնակցությամբ ստորագրվեց պայմանագիր, որով հռչակվեց Եմենի Հանրապետությունը և հաստատվեց անցումային շրջանը՝ երկու տարի վեց ամիս: Անցումային շրջանում Հարավի և Հյուսիսի խորհրդարանների՝ ժողովրդական և Շուրայի խորհուրդների ընտրությամբ պետք է ձևավորվեր Նախագահական Խորհուրդ (ՆԽ)՝ հինգ անդամներով, որոնք իրենց առաջին հանդիպման ժամանակ պետք է ընտրեին Խորհրդի նախագահ և տեղակալ: Անցումային շրջանում ձևավորվելու էր խորհրդարան ժողովրդական և Շուրայի խորհուրդների բոլոր անդամների մասնակցությամբ: ՆԽ-ը կողմից ստեղծվելու էր Եմենի Հանրապետության կառավարություն, որ լիազորված էր լինելու իրագործելու սահմանադրությամբ կառավարության համար նախատեսված իրավասությունները: ՆԽ-ը մինչև անկախության հռչակումը պետք է սահմանադրությունը ներկայացներ հանրաքվեի: 1990թ. մայիսին երկու կողմերի խորհրարարններում հաստատվեցին սահմանադրության նախագծերը և միասնության մասին որոշումները: 1990թ. մայիսի 22-ին հռչակվեց Եմենի Հանրապետությունը: Եմենի ժողովուրդն իրականացրեց իր ամենամեծ նվաճումներից մեկը: Մայիսի 22-ին Ադենում անցկացվեց ՆԽ-ի հինգ անդամների ընտրություն: Նախագահական Խորհրդի առաջին նիստում Ալի Աբդալլա Սալիհն ընտրվեց Խորհրդի նախագահ, իսկ Ալի Սալիմ Ալբիդը՝ տեղակալ: Հրապարակվեց նորաստեղծ հանրապետության դրոշի, զինանշանի, հիմնի և ազգային օրվա վերաբերյալ չորս հրամանագիր:

Ատենախոսության չորրորդ գլխում՝ «ԵՄԵՆԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ», ուսումնասիրվում է Եմենի երկու հատվածներում 1980-ականների ներքաղաքական կյանքի ամենակարևոր զարգացումները՝ կապված Հյուսիսում Համաժողովրդական կոնգրեսի և Հարավում սոցիալիստական կուսակցության գործունեության հետ, ինչպես նաև Եմենի

միավորման հարցում «սառը» պատերազմի շրջանում ստեղծված միջազգային նախադրյալները:

Գլխի առաջին ենթաբաժնում ներկայացված է Հյուսիսային Եմենում և նրա շուրջն ընթացող քաղաքական զարգացումները: 1978թ. իշխանության եկած Սալիհը, հաշվի առնելով մինչև իր կառավարման շրջանը երկրում տեղ գտած քաղաքական ճգնաժամերը, փորձեց համախմբել ազգային քաղաքական ուժերին և իր կառավարման համար ապահովել սոցիալական լայն հենարան: 1980թ. մայիսի վերջին ստեղծվեց ազգային երկխոսության հանձնախումբը, որը մշակեց ազգային խարտիա, ինչպես նաև նախապատրաստեց Համաժողովրդական կոնգրեսի ստեղծումը: Ազգային խարտիան պետք է դառնար Հյուսիսային Եմենի միակ գաղափարական հայեցակարգը, իսկ Համաժողովրդական կոնգրեսը՝ միակ քաղաքական համակարգը: Ազգային խարտիայում Եմենի միավորումը դիտարկված էր որպես եմենցի ժողովրդի գոյատևման, զարգացման և խաղաղ գոյակցության միակ երաշխիք: Եմենի երկու մասերի պատերազմին հաջորդած փուլում ազգային տարբեր ուժերի հետ երկխոսությունն օգնեցին նախագահ Ալի Աբդալլա Սալիհին՝ երկրում ամրապնդելու իր դիրքերը: «Սառը» պատերազմի տարիները մեծ ազդեցություն ունեցան Հյուսիսային Եմենի և Հարավային Եմենի հարաբերությունների վրա: Հյուսիսը որդեգրել էր զարգացման ավելի արևմտամետ կուրս՝ համագործակցելով ԱՄՆ-ի հետ: Եմենի միավորմանը խթանեց ԱՄՆ-ը՝ պաշտպանելով միացյալ Եմենի գաղափարը, ինչը բացատրվում է Եմենում ամերիկյան նավթային ընկերությունների շահերով և Եմենի առանձնահատուկ ռազմավարական դիրքով: Սալիհը, որ լավ հարաբերությունների մեջ էր ԱՄՆ-ի հետ, 1989թ. նոյեմբերի 30-ին և 1990թ. հունվարի 24-ին Ադենում միավորման պայմանագրի ստորագրումից հետո այցելեց ԱՄՆ և Ֆրանսիա՝ ձեռք բերելու նրանց աջակցությունը Եմենի միավորման հարցում: ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը հավանության արժանացրեց Եմենի երկու հատվածների միավորման գաղափարը: Սալիհի այցելությունը ԱՄՆ-ի վարչակարգին օգնեց հասկանալ, որ Եմենի միավորումը տարածաշրջանային առումով ռազմավարական մեծ նշանակություն ունի: Ապագայի ժողովրդավար և արդիականացված միացյալ Եմենը կարող էր դառնալ ամերիկյան անվտանգության գոտի թերակղզու հարավում: «Սառը» պատերազմի ավարտից հետո, հայտնվելով միջազգային նոր իրադրության մեջ, Եմենի երկու հատվածները կարողացան օգտագործել առիթը, 1990թ. մայիսին ավարտին հասցնելու Եմենի միավորման գործընթացը: 1980-ականների մասնավորապես առաջին կեսին մերձեցման կարևոր զարգացումներ տեղի

ունեցան արաբական աշխարհում: Եմենի միավորման գաղափարը պաշտպանեց 1989թ. հիմնված Արաբական Համագործակցության Խորհուրդը: 1990թ. մայիսին Բաղդադում գումարված արտահերթ գագաթնաժողովում ԱՀԽ-ին անդամակցեց միացյալ Եմենը:

Երկրորդ ենթաբաժինը նվիրված է Հարավային Եմենում և նրա շուրջ ընթացող քաղաքական զարգացումներին: Ինչպես գիտենք, դեռևս 1960-70-ական թվականներին վերընթաց զարգացում ապրեցին խորհրդաեմենական հարաբերությունները: Ադենը, որ ծովային և ցամաքային արտոնություններ էր տրամադրել ԽՍՀՄ-ին, միաժամանակ քաղաքական, տնտեսական և ռազմական աջակցություն էր ստանում նրանից: 1980-ականների երկրորդ կեսին Խորհրդային Միությունում և Արևելյան Եվրոպայում տեղի ունեցող արագընթաց շրջադարձերի արդյունքում Հարավի վարչակարգը կորցրեց կարևոր դաշնակից, կրճատվեց սոցիալիստական ճամբարից ստացվող օգնությունը: Իրականում, եթե 1986թ. կուսակցության ներսում պառակտում չլիներ և եթե չլիներ սոցիալիստական համակարգի ճգնաժամը, ապա կուսակցությունը կշարունակեր մերժել Եմենի միավորումը: Ե'վ ներքին արյունալի բախումների թողած խոր հետքերը, և' ԽՍՀՄ-ից ու սոցիալիստական երկրներից ստացվող օժանդակության աստիճանական մարումը, Հյուսիսի իշխանության օրըստօրե ամրապնդման պայմաններում, առաջացրեց իշխանության լուրջ ճգնաժամ, որի հաղթահարումը համեմատաբար դյուրին կլիներ Հյուսիսին միանալու ճանապարհով:

1967թ. անկախությունից ի վեր աջերի և ձախերի բաժանված «Ազգային ճակատի» անդամների միջև ցանկացած երկխոսություն, վերածվելով ընդհարման, ի վերջո ձախողվում էր: Հանրապետության ոչ մի նախագահ ինքնակամ չէր հեռանում իշխանությունից, այլ հարկադրաբար հեռացվում էր՝ որպես կանոն մեղադրվելով հետադիմության, օպորտունիզմի, ձախականության կամ էլ Եմենի միավորմանը դեմ լինելու մեջ: Իրականում Հարավային Եմենը ձգտում էր կառուցել ԽՍՀՄ-ի և արևելյան Եվրոպայի երկրների տիպի պետություն: Հարավի մարքսիստական վարչակարգի պատմությունն ընթացել է լուրջ սխալներով ու բացթողումներով, ուղեկցվել հակառակորդների դեմ դաժան հաշվեհարդարներով, սոցիալիստական օրենքների հրապարկմամբ (որոնց արդյունքում հարավեմենական կապիտալը դուրս բերվեց երկրից, իսկ առևտրականները Հարավից անցան Հյուսիս), բանակում ոչ մարքսիստական ձգտումներ ունեցող տարրերի զտումներով, արյունալի բախումներով: Հարավային Եմենը 1972 և 1979թթ. երկու անգամ պատերազմի մեջ մտավ Հյուսիսի հետ: Միավորմանը

նախորդող շրջանում Հարավային Եմենի վարչակարգը սկսեց բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարևան պետությունների (Հյուսիսային Եմեն, Սաուդյան Արաբիա, Ծոցի պետություններ) հետ, իսկ 1980-ականների սկզբին հրաժարվեց աջակցել Արաբական թերակղզու վարչակարգերին ընդդիմադիր ծախ զինված շարժումներին: 1978թ. հոկտեմբերին ստեղծվեց Եմենի սոցիալիստական կուսակցությունը, որի գործունեության մեջ բեկում մտցրեցին 1986թ. հունվարի 13-ի զինված բախումները: Պայքարն ընթացավ պետության և սոցիալիստական կուսակցության նախագահ Ալի Նասեր Մուհամմադի և նրա կողմից իշխանությունից հեռացված Աբդ ալ-Ֆաթթահ Իսմայիլի համախոհների՝ Ալի Անթարի, Սալիհ Մուսլիհի, Ալի Սալիմ Ալբիդի և սոցիալիստական կուսակցության քաղբյուրոյի աչքի ընկնող մի շարք գործիչների միջև:

Սույն գլխի <u>երրորդ ենթաբաժնում</u> քննարկվում է Եմենի երկու հատվածներում նավթի հայտնաբերումը: 1984թ. ամերիկյան "Հսոt" ընկերությունը հայտարարեց Եմենի երկու մասերի սահմանային շրջաններում նավթի մեծ քանակների հայտնագործման մասին: Նավթի հայտնաբերումը կարող էր նպաստել երկու հատվածներում տնտեսական և սոցիալական առաջընթացին, ինչպես՝ Ծոցի հարևան երկրներում: Նավթի հայտնագործման հետևանքով 1986-1988թթ. Եմենի երկու հատվածների կառավարությունների միջև մրցավազք սկսվեց՝ կապված նավթային ընկերություններին նավթի արդյունահանման և շահագործման արտոնություններ տալու հետ: Քիչ մնաց, որ նավթի պատճառով երկու վարչակարգերի միջև նոր պատերազմ սկսվի: Նավթի շուրջ առաջացած ճգնաժամի պատճառով 1988թ. ապրիլի 16-ին Թաիզում տեղի ունեցավ գագաթնաժողով Հյուսիսային Եմենի նախագահ Ալի Աբդալլա Սալիհի և Հարավում իշխող սոցիալիստական կուսակցության գլխավոր քարտուղար Ալի Սալիմ Ալբիդի մասնակցությամբ, որը կարողացավ կարգավորել առկա խնդիրները և ստորագրել նավթի և նրա շահագործման համատեղ հորման պայմանագիր, ինչը ծառայեց երկու մասերի տնտեսական շահերին՝ տարածաշրջանը զերծ պահելով երկկողմ զինված ընդհարումից: 1988թ. մայիսի 3-4-ը Սանայի գագաթնաժողովում որոշվեց ստեղծել եմենական ընկերություն, որ զբաղվելու էր երկու հատվածների նավթային և մետաղյա պաշարների շահագործմամբ: Պայմանագրի ստորագրումը չէր ենթադրում սահմանային շրջանների սահմանազատում: Եմենական միավորման ուղին հնարավոր դարձրեց լուծել նավթային խնդիրը՝ դիտարկելով այն Եմենի միավորման իրողություն: Նավթի հայտնագործումը ազդեցիկ և խթանող դեր

զինված ընդհարումից: 1988թ. մայիսի 3-4-ը Սանայի գագաթնաժողովում որոշվեց ստեղծել եմենական ընկերություն, որ զբաղվելու էր երկու հատվածների նավթային և մետաղյա պաշարների շահագործմամբ: Պայմանագրի ստորագրումը չէր ենթադրում սահմանային շրջանների սահմանազատում: Եմենական միավորման ուղին հնարավոր դարձրեց լուծել նավթային խնդիրը՝ դիտարկելով այն Եմենի միավորման իրողություն: Նավթի հայտնագործումը ազդեցիկ և խթանող դեր խաղաց միավորման հարցում՝ տարանջատման գործոնից վերածվելով միավորման գործոնի:

ԵԶՐԱՓԱԿՄԱՆ մեջ, ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, հեղինակը եզրակացնում է, որ՝ 1. Եմենական երկու պետությունների ստեղծումից ի վեր միասնության գաղափարը դարձել էր եմենական ազգային արժեհամակարգի ամենահիմնական տարրերից մեկը և հնարավորություն էր տալիս ապահովելու առավելագույն ժողովրդական աջակցություն: 2.Ի տարբերություն Եմենի երկու հատվածների միջև 1960-70-ականներին առկա հակասական և անկայուն հարաբերությունների, լարվածության և բախումների, 1980-ականներն աչքի ընկան Եմենի միավորման գործընթացների նպատակաուղղվածությամբ և գործնական շեշտադրումներով: 3.«Սառը» պատերազմի տարիներին Եմենի երկու հատվածների հարաբերություններն աչքի են ընկել քաղաքական և գաղափարական մրցակցությամբ, ինչը դժվարացրել է միավորման գործընթացը: 4.Եմենի միավորմանը մեծապես նպաստեցին «սառը» պատերազմից հետո ստեղծված միջազգային նոր իրողությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԿՈՒՄՆԵՐԸ

1.Աբդ ալ-Համիդ Ի., Հյուսիսային և Հարավային Եմենի հարաբերությունները 1967-1979թթ., «Կանթեղ» (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, «Ասողիկ», 2004, թիվ 1 (18), էջ 148-155:

2.Աբդ ալ-Համիդ Ի., Եմենի միավորման գործընթացը 1980-1990թթ., «Կանթեղ» (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, «Ասողիկ», 2004, թիվ 2 (19), էջ 148-155:

АБД АЛЬ-ХАМИД ИХАБ

ПРОЦЕСС ОБЪЕДИНЕНИЯ ЙЕМЕНА
(1967-1990 ГГ.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07. 00.02. – "Всеобщая история"

Защита состоится 29 июня в 14^{00} 2004 г. по адресу: 375019, г.Ереван, проспект Маршала Баграмяна, 24 г., Институт Востоковедения НАН РА

Резюме

Изучение процесса объединения двух государств Йемена (Йеменская Арабская Республика и Народно-Демократическая Республика Йемен) в 1960-х гг. (1960-90 гг.) актуально и важно с научной, политической и практической точек зрения.

Исследование данного явления будет способствовать правильному пониманию ряда ключевых моментов в внутриполитических процессах, а также вопросах формирования внешнеполитических ориентаций двух республик.

Тема диссертации не являлась предметом отдельного исследования. По своему содержанию и поднятым проблемам это работа является первым исследованием в армянском востоковедении.

Диссертация состоит из вступления, четырех глав (каждая из которых содержит, соответственно, разделы), заключения и списка использованных источников и литературы.

Во вступлении говорится об актуальности и важности темы диссертации, целях и задачах исследования, обосновывается теоретическое и практическое значение работы, дается краткий обзор использованных источников и литературы, разъясняются метологические основы работы и научная новизна.

В первой главе («Социальная и политическая ситуация в Йемене в дореволюционный период») рассматриваются социальное положение Йемена, а также политические процессы протекающие в Южном и Северном Йемене в дореволюционный период.

Вторая глава («Создание двух йеменских республик») посвящена распаду монархии на Севере, антиколониальным национально-освободительным процессам на Юге, созданию в стране двух республик и их отношениям, войнам между этими странами 1972 и 1979 гг, а также началу объединительного процесса.

Третья глава («Процесс объединения Йемена и образование объединенного Йеменского государства»), освещает направленные на объединение встречи на высшем уровне, работу в рамках советов министров двух сторон, Верховного совета Йемена и его секретариата в 1980-90 х гг., отдельные внутриполитические проблемы на Севере, а также договор подписанный в апреле 1990 г. в Сане и провозглашение 22 мая 1990 г. Республики Йемен.

В четвертой главе («Внутренние и внешние предпосылки объединения Йемена») исследуется важнейшие направления развития внутриполитической жизни двух частей Йемена в 1980-х гг., связанные с объединительными процессами в деятельности Всенародного конгресса на севере и социалистической партии на Юге, а также факторы международной жизни второй половины 80-х гг., способствующие созданию единого государства.

В заключении диссертант подводит итоги своей работы и приходит к выводам по основным вопросам указанных проблем.

Тезисы, материалы и данные могут использоваться в исследованиях, посвященных политическим процессам Йемена, а также других стран Ближнего Востока. Результаты исследования могут быть полезны для подготовки аналитических материалов в государственных органах, а также с точки зрения разработки некоторых, связанных с Йеменом, внешнеполитических вопросов.

IHAB ABDEL HAMID
THE PROCESS OF UNIFICATION OF YEMEN
(1967-1990)